Պարոն/Տիկին Ա. Պետրոսյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան

«15» 10 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը-Մոմջյան Մարիամ.

2. Զբաղեցրած պաշտոնը-ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները-Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 2024 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)-ԱՄՆ առևտրի դեպարտամենտ.

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). ԱՄՆ առևտրի դեպարտամենտի SABIT ծրագրի շրջանակում կազմակերպվող SABIT-ի քաղաքային ջրերի կառավարման ծրագրին մասնակցություն:

ԱՄՆ առևտրի դեպարտամենտի SABIT ծրագիրը առաջնորդների փոխանակման ծրագիր է՝ ուղղված Միացյալ Նահանգների, ԱՄՆ մասնավոր հատվածի, մասնագիտական ասոցիացիաների, կրթական հաստատությունների և ԱՄՆ դաշնային, նահանգային և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով ԱՄՆ-ի լավագույն փորձը Եվրասիայի, Հարավային Ասիայի և Եվրոպայի առաջնորդներին փոխանցելուն: Ծրագրի շրջանակում ներկայացվեցին մասնավոր հատվածի կողմից նորարարությունը, ներդրումները և տնտեսական աճը խթանելու ԱՄՆ դաշնային, նահանգային և տեղական ինքնակառավարման մարմինների փորձառությունը և պետություն մասնավոր հատված-կրթական հաստատություններ համագործակցության կիրառվող արդյունավետ մեխանիզմները, որոնք ստեղծում են ընկերությունների և կրթական հաստատությունների համար ներդրումներ կատարելու ավելի բարենպաստ միջավայր: Ծրագրի շրջանակում մասնակիցներին ներկայացվել են ջրային ռեսուրսների կառավարման ԱՄՆ 3 նահանգների

առաջավոր բիզնես պրակտիկաները, տեխնոլոգիաները և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում հաստատված նահանգային չափանիշները:

7. Հանդիպումները, ելույթները.-Ծրագրի շրջանակում կազմակերպվել են թրեյնինգներ և հանդիպումներ՝ ջրային ռեսուրսների կառավարման քաղաքականության, օրենսդրության, ստանդարտների, հավաստագրման, բիզնես պլանի մշակման, միջմշակութային բանակցությունների և կառավարման վերաբերյալ, հանդիպումներ երկու ասոցիացիաների և շուրջ 1 տասնյակ ընկերությունների հետ:

Հանդիպումների և ընկերություններ այցելությունների հիմնական նպատակը ամբողջ աշխարհում քաղաքային ջրերի կառավարման ոլորտի զարգացմանը նպաստելն է՝ ԱՄՆ-ում մշակված և ներդրված նորարարական տեխնոլոգիաները և միտումները ներկայացնելու միջոցով, ինչպես նաև Եվրասիայի մասնագետների հետ համագործակցությունը խրախուսելը:

Այցելությունները ներառել են ջրային տեխնոլոգիաների համաշխարհային այնպիսի մատակարար ընկերություններ, որոնք օգնում են հաճախորդներին լուծել կոմունալ ծառայությունների ոլորտում ամենաբարդ խնդիրները, արդյունաբերական, առևտրային և բնակելի ջրամատակարարման և կեղտաջրերի ծառայություններ ամբողջ աշխարհում (Xylem, Ashburton Filtration Plant, AlexRenew, Back River Wastewater treatment Plant, Freedom District Wastewater Treatment Plant, Walnut Creek Wastewater Treatment Plant, Hornsby Bend Biosolids Management Plant, National Drought Mitigation Center, San Antonio Water, Sewerage and Water Board of New Orleans, Jr. Regional Water Reclamation Plant, Potomac plant Water Filtration Facility և այլն), ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում ակտիվ դերակատարություն ունեցող պետական մարմիններ, ասոցիացիաներ (U.S. Environmental Protection Agency, Virginia Department of Environmental Quality, Association of Metropolitan Water Agencies, Association of Clean Water Agencies System): Ծրագրի շրջանակում մասնակցել եմ ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի ԱՄՆ խոշորագույն ցուցահանդեսին՝ WEFTEC-ին, որին մասնակցում են ավելի քան 23000 ընկերություններ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.-Հանդիպումների արդյունքներով պայմանավորվածություն է ձեռք բերվել ամերիկյան պետական կառավարման մարմինների և ասոցացիաների, ինչպես նաև ընկերությունների ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության շնորհիվ հաստատել աշխատանքային հարաբերություններ՝ ջրի և թափոնների կառավարման ոլորտում ԱՄՆ

լավագույն փորձը ՀՀ-ում ներկայացնելու նպատակով, որի համար տրամադրված նյութերը կդառնան ուսումնասիրության առարկա:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Շարունակել ջրի և թափոնների կառավարման ոլորտում ԱՄՆ առաջավոր փորձի ուսումնասիրությունը, որը կարող է օգտակար լինել ՀՀ ջրային բնագավառի հետագա բարեփոխումների համար:

Գործուղվող ---------- 15.10.2024թ

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 974-ԳՔ, 26.09.2024թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ **Մարիամ Մոմջյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ԱՄՆ**

5. Գործուղման ժամկետները **27.09.2024-13.10.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(*թվարկել՝* **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(*թվարկել՝* ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված

Ծախսի տեսակը		*Մարիամ Մոմջյան*	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	-	-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)
Ամսաթիվ

14.10.24